## *1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ*

*Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:* Բնակչության դրամական եկամուտները 2004թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 1343185.0 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 1334489.5 մլն.դրամ, դրանց աճի տեմպերը 2003թ. հունվար-դեկտեմբերի համեմատ կազմել են համապատասխանաբար 116.8% և 116.5%:

*Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները:* Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2004թ. հունվար-դեկտեմբերին 2003թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ աճել են 8.9%-ով:

**Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը**

*(%)*

| | Տեսակարար կշիռը եկամուտներում հունվար-դեկտեմբեր 2003 | 2004 | 2004թ. հունվար-դեկտեմբերի աճի տեմպը 2003թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ | 2004թ. տեսակարար կշռի տոկոսային փոփոխությունը 2003թ. նկատմամբ |
|---|---|---|---|---|
| ***Դրամական եկամուտներ*** | ***100*** | ***100*** | ***116.8*** | **-** |
| *որից օգտագործվել է* | | | | |
| ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար | 81.1 | 82.3 | 118.5 | 1.2 |
| պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար | 4.4 | 4.6 | 121.7 | 0.2 |
| ավանդների հավելաճ | 1.0 | 0.8 | 89.9 | -0.2 |
| արտարժույթի գնում | 13.1 | 11.7 | 104.2 | -1.4 |
| ***Դրամական ծախսեր*** | ***99.6*** | ***99.4*** | ***116.5*** | ***-0.2*** |
| *Եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ* | *0.4* | *0.6* | *183.1* | *0.2* |

**Բնակչության դրամական ծախսերի կառուցվածքը**

*(ընթացիկ գներով, մլն.դրամ)*



**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտների դինամիկան**
*(նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %)*




*Աշխատանքի վարձատրություն:* 2004թ. հունվար-դեկտեմբերին, ըստ յուրաքանչյուր ամիս օպերատիվ վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 կազմակերպությունների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, աշխատողների անվանական միջին աշխատավարձը կազմել է 41976 դրամ և 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 23.1%-ով: Բյուջետային կազմակերպություններում աշխատողների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 26671 դրամ և 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 29.3%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում աշխատողներինը, համապատասխանաբար 54473 դրամ և աճել՝ 20.5%-ով:

**Բյուջետային և ոչ բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններում աշխատողների անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը 2003-2004թթ.**

| | Ընդամենը | բյուջետային | ոչ բյուջետային | Ընդամենը | բյուջետային | ոչ բյուջետային |
|---|---|---|---|---|---|---|
| | 2003թ., դրամ | | | 2002թ. նկատմամբ, % | | |
| Հունվար- մարտ | 29089 | 17317 | 39549 | 118.7 | 114.0 | 119.6 |
| Հունվար- հունիս | 30104 | 17715 | 40601 | 118.8 | 114.4 | 118.5 |
| Հունվար- սեպտեմբեր | 31319 | 18444 | 42093 | 122.2 | 118.5 | 121.4 |
| Հունվար- դեկտեմբեր | 33871 | 20627 | 45224 | 125.9 | 129.8 | 123.0 |
| | 2004թ., դրամ | | | 2003թ. նկատմամբ, % | | |
| Հունվար- մարտ | 38461 | 25287 | 49658 | 132.2 | 146.0 | 124.7 |
| Հունվար- հունիս | 39950 | 25858 | 51783 | 132.7 | 146.0 | 127.5 |
| Հունվար- սեպտեմբեր✧ | 40773 | 25775 | 53224 | 130.2 | 139.7 | 126.4 |
| Հունվար- դեկտեմբեր[1] | 41976 | 26671 | 54473 | 123.1 | 129.3 | 120.5 |

[1] *Գնահատական:*

### Անվանական միջին ամսական աշխատավարձի փոփոխությունը 2003թ. նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի, 2004թ.

| | Անվանական միջին աշխատավարձը, դրամ | | Ընդամենի նկատմամբ, % | | 2003թ.✧ նկատմամբ, % | |
|---|---|---|---|---|---|---|
| | նոյեմբեր | հունվար-նոյեմբեր | նոյեմբեր | հունվար-նոյեմբեր | նոյեմբեր | հունվար-նոյեմբեր |
| **Ընդամենը** | 43870 | 41034 | 100 | 100 | 123.3 | 128.2 |
| Արդյունաբերություն | 65220 | 58606 | 148.7 | 142.8 | 120.2 | 112.1 |
| Գյուղատնտեսություն | 32428 | 32495 | 73.9 | 79.2 | 123.7 | 126.2 |
| Անտառտնտեսություն | 23186 | 23975 | 52.9 | 58.4 | 151.6 | 154.6 |
| Տրանսպորտ | 56887 | 54469 | 129.7 | 132.7 | 117.3 | 107.6 |
| Կապ | 55915 | 55214 | 127.5 | 134.6 | 100.3 | 101.9 |
| Շինարարություն | 58621 | 59199 | 133.6 | 144.3 | 102.0 | 123.2 |
| Առևտուր, հանրային սնունդ | 24526 | 19583 | 55.9 | 47.7 | 143.4 | 121.0 |
| Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում | 50917 | 47634 | 116.1 | 116.1 | 116.8 | 118.5 |
| Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն | 21253 | 19330 | 48.4 | 47.1 | 139.6 | 142.6 |
| Կրթություն | 26974 | 26497 | 61.5 | 64.6 | 153.0 | 156.3 |
| Մշակույթ | 20769 | 18881 | 47.3 | 46.0 | 137.6 | 140.6 |
| Արվեստ | 22677 | 18700 | 51.7 | 45.6 | 141.4 | 128.0 |
| Գիտություն և գիտական սպասարկում | 29939 | 27304 | 68.2 | 66.5 | 109.5 | 109.3 |
| Վարկավորում և ապահովագրություն | 156533 | 144816 | 356.8 | 352.9 | 91.4 | 111.3 |
| Կառավարման ապարատ | 67271 | 62880 | 153.3 | 153.2 | 112.6 | 130.9 |
| Այլ | 35310 | 33201 | 80.5 | 80.9 | 113.8 | 114.4 |



## Աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ճյուղերի ընդամենը միջինի նկատմամբ, %




## Անվանական և իրական միջին ամսական աշխատավարձերի դինամիկան ըստ 2004թ. ամիսների և փոփոխությունը 2003թ. նկատմամբ (դրամ, ԱՄՆ դոլար, եվրո)

| | Անվանական միջին աշխատա-վարձը, **դրամ** | % | | Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, **դրամ** | | % | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2003թ. նույն ամսվա նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա նույն ամսվա | նախորդ ամսվա | նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ |
| Հունվար | 36407 | 128.6 | 81.7 | 34057 | 35519 | 120.3 | 79.7 |
| Փետրվար | 38243 | 134.4 | 105.0 | 35410 | 38474 | 124.4 | 105.7 |
| Մարտ | 40403 | 133.0 | 105.6 | 37135 | 40282 | 122.3 | 105.3 |
| Ապրիլ | 40229 | 132.0 | 99.6 | 37284 | 39752 | 122.3 | 98.4 |
| Մայիս | 41507 | 131.8 | 103.2 | 38468 | 41055 | 122.1 | 102.1 |
| Հունիս | 42482 | 130.5 | 102.3 | 40002 | 42525 | 122.9 | 102.5 |
| Հուլիս | 42811 | 127.0 | 100.8 | 39061 | 43909 | 115.9 | 103.4 |
| Օգոստոս | 41797 | 123.2 | 97.6 | 38171 | 42825 | 112.6 | 100.0 |
| Սեպտեմբեր | 43009 | 123.7 | 102.9 | 40536 | 43312 | 116.6 | 103.6 |
| Հոկտեմբեր | 42833 | 123.1 | 99.6 | 40294 | 42790 | 115.8 | 99.5 |
| Նոյեմբեր✧ | 43870 | 123.3 | 102.4 | 41861 | 43522 | 117.7 | 101.6 |
| Դեկտեմբեր[1] | 52424 | 117.6 | 119.5 | 51396 | 51245 | 115.3 | 116.8 |

| | Անվանական միջին աշխատա-վարձը, **ԱՄՆ դոլար** | % | | Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, **ԱՄՆ դոլար** | | % | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2003թ. նույն ամսվա նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա նույն ամսվա | նախորդ ամսվա | նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ |
| Հունվար | 64 | 131.9 | 81.2 | 60 | 62 | 123.4 | 79.3 |
| Փետրվար | 68 | 139.6 | 105.8 | 63 | 68 | 129.3 | 106.4 |
| Մարտ | 72 | 139.5 | 105.9 | 66 | 72 | 128.3 | 105.6 |
| Ապրիլ | 72 | 139.4 | 100.6 | 67 | 71 | 129.2 | 99.5 |
| Մայիս | 75 | 139.7 | 104.0 | 70 | 74 | 129.5 | 102.8 |
| Հունիս | 78 | 140.4 | 104.0 | 74 | 78 | 132.2 | 104.1 |
| Հուլիս | 81 | 139.9 | 104.2 | 74 | 83 | 127.7 | 106.9 |
| Օգոստոս | 81 | 137.7 | 99.2 | 74 | 83 | 125.7 | 101.6 |
| Սեպտեմբեր | 84 | 138.5 | 103.7 | 79 | 84 | 130.5 | 104.5 |
| Հոկտեմբեր | 85 | 137.1 | 101.0 | 80 | 85 | 129.0 | 100.9 |
| Նոյեմբեր✧ | 87 | 138.5 | 103.2 | 83 | 87 | 132.1 | 102.4 |
| Դեկտեմբեր[1] | 108 | 136.7 | 123.5 | 106 | 105 | 134.1 | 120.8 |

[1] *Գնահատական:*

| | Անվանական միջին աշխատա-վարձը, **եվրո** | % | | Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, **եվրո** | | % | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2003թ. նույն ամսվա նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա նույն ամսվա | նախորդ ամսվա | նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ |
| Հունվար | 51 | 111.1 | 79.0 | 47 | 50 | 103.9 | 77.0 |
| Փետրվար | 54 | 119.1 | 105.6 | 50 | 54 | 110.3 | 106.3 |
| Մարտ | 59 | 122.8 | 109.2 | 54 | 58 | 112.9 | 108.8 |
| Ապրիլ | 60 | 125.8 | 102.8 | 56 | 59 | 116.6 | 101.5 |
| Մայիս | 63 | 134.7 | 104.2 | 58 | 62 | 124.9 | 103.1 |
| Հունիս | 64 | 134.9 | 102.6 | 61 | 64 | 127.0 | 102.7 |
| Հուլիս | 66 | 129.1 | 102.6 | 60 | 68 | 117.8 | 105.2 |
| Օգոստոս | 66 | 125.8 | 100.5 | 61 | 68 | 114.9 | 103.0 |
| Սեպտեմբեր | 69 | 127.1 | 103.5 | 65 | 69 | 119.8 | 104.2 |
| Հոկտեմբեր | 68 | 128.4 | 98.7 | 64 | 68 | 120.8 | 98.6 |
| Նոյեմբեր✧ | 67 | 125.0 | 99.3 | 64 | 67 | 119.3 | 98.6 |
| Դեկտեմբեր[1] | 81 | 125.3 | 119.7 | 79 | 79 | 122.8 | 117.0 |

Միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպը 2003թ. նկատմամբ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով, 2004թ.




Միջին ամսական անվանական աշխատավարձը տնտեսության հատվածներում




[1] Գնահատական:

Միջին ամսական անվանական, իրական և սահմանված նվազագույն աշխատավարձերի հարաբերակցությունը

*(դրամ)*




Հանրապետությունում առկա աշխատուժի և ձևավորված աշխատաշուկային առնչվող հիմնահարցերի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվություն ստանալու նպատակով 2004թ. օգոստոս ամսին 2539 տնային տնտեսություններում իրականացվել է աշխատուժի ընտրանքային հետազոտություն:

Ի տարբերություն մինչ այժմ իրականացված համանման հետազոտությունների, սույն հետազոտությամբ ստացվել են տվյալներ նաև վարձու աշխատողների միջին աշխատավարձի վերաբերյալ տարբեր կտրվածքներով. ըստ տարիքային կազմի, կրթական մակարդակի, զբաղմունքի, մասնագիտության, տնտեսության հատվածների, տնտեսական գործունեության տեսակների և այլն: Վարձատրությանն առնչվող հարցերը վերաբերել են հետազոտվող շաբաթվան նախորդող ամսին:

### Վարձու աշխատողների բաշխումն ըստ աշխատավարձի չափերի և տնտեսության հատվածների[1]




### Վարձու աշխատողների միջին աշխատավարձն ըստ մասնագիտությունների

| | Միջին աշխատավարձը, ընդամենը | Ընդամենի նկատմամբ, % |
|---|---|---|
| **Ընդամենը** | **33304** | **100** |
| Բնական և ինժեներական բնագավառի մասնագետներ | 43934 | 131.9 |
| Կենսաբանական, գյուղատնտեսական գիտությունների և առողջապահության մասնագետներ | 24802 | 74.5 |
| Կրթության ոլորտի մասնագետներ | 23090 | 69.3 |
| Բարձր որակավորման այլ մասնագետներ | 38181 | 114.6 |
| Ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառի միջին որակավորման մասնագետներ | 38048 | 114.2 |
| Բնական գիտությունների և առողջապահության միջին որակավորման մասնագետներ և օժանդակ անձնակազմ | 17536 | 52.7 |
| Կրթության բնագավառի միջին որակավորման մասնագետներ | 17910 | 53.8 |
| Ֆինանսատնտեսական բնագավառի, վարչական և սոցիալական գործունեության միջին անձնակազմ | 29500 | 88.6 |
| Տեղեկատվության մշակում, փաստաթղթերի ձևակերպում և հաշվառում իրականացնող ծառայողներ | 17188 | 51.6 |
| Սպասարկման ոլորտի ծառայողներ | 25751 | 77.3 |
| Անհատական ծառայությունների, քաղաքացիների և նրանց սեփականության պաշտպանությունն ապահովող աշխատողներ | 26675 | 80.1 |
| Վաճառողներ, ապրանք ցուցադրողներ, բնորդներ, հագուստ ցուցադրողներ | 27300 | 82.0 |

[1] *Աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալներով:*

| | Միջին աշխատավարձը, ընդամենը | Ընդամենի նկատմամբ, % |
|---|---|---|
| Բնակարանային-կոմունալ տնտեսության բանվորներ | 32167 | 96.6 |
| Շուկայական ուղղվածություն ունեցող գյուղատնտեսական ապրանքների արտադրության, անտառտնտ.,ձկնաբուծության և ձկնորսության որակավորված աշխատողներ | 55001 | 165.1 |
| Հանքային, հանքարդյունահանող արդյունաբերության և շինմոնտաժման բանվորներ | 39417 | 118.4 |
| Մետաղամշակման և մեքենաշինության բանվորներ | 39145 | 117.5 |
| Գերճշգրիտ գործիքներ, սարքեր, գեղարվեստական իրեր պատրաստող և պոլիգրաֆիական արտադրության բանվորներ | 48039 | 144.2 |
| Խոշոր և մանր արդյունաբերական որակավորված բանվորներ | 24297 | 73.0 |
| Տրանսպորտի և կապի բանվորական մասնագիտություններ | 31223 | 93.7 |
| Լեռնաարդյունահանող և լեռնահարստացուցիչ սարքավորումների օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ | 45001 | 135.1 |
| Ստացիոնար սարքավորումների օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և փականագործ- հավաքողներ | 31223 | 93.7 |
| Լոկոմոտիվների մեքենավարներ և հարակից մասնագիտությունների բանվորներ | 40706 | 122.2 |
| Հանքային, հանքարդյունաբերության, շինմոնտաժային, շինվերանորոգման որակավորում չունեցող բանվորներ | 60001 | 180.2 |
| Տնտեսության բոլոր ճյուղերին ընդհանուր, որակավորում չունեցող բանվորներ | 12500 | 37.5 |
| Զինվորական-սպայական անձնակազմ (անժամկետ աշխատողներ) | 50834 | 152.6 |